Հ ա շ վ ե տ վ ու թ յ ու ն

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Տ. Սարգսյանի կողմից 2019թ օգոստոսի 18-22-ը Շվեյցարիայի Համադաշնություն կատարած գործուղման արդյունքների վերաբերյալ.

ՀՀ Վարչապետի 2019թ. թիվ 1171-Ա որոշմամբ ՀՀ Վայոց ձորի մարզպետը, 4 հոգուց բաղկացած պատվիրակության կազմով 2019թ. օգոստոսի 18-22-ը գործուղվեց Շվեյցարիայի Համադաշնություն, ուղևորությունը կրում էր ճանաչողական և գործարար բնույթ: Գործուղման ողջ ծախսերը հոգացել էր Վահե Գաբրաշը:

Դեռևս 2019թ գարնանը պարոն Գաբրաշն այցելել էր Վայոց Ձորի մարզ, մասնավորապես Արենի համայնք: Այցելությունից հետո առաջարկել էր իր հնարավորությունների սահմաններում, ներդրումներ կատարել Վայոց Ձորի մարզում: Համագործակցության արդյունքում կազմվեց ծրագիր Արենի համայնքի բարեփոխումների վերաբերյալ: Ծրագիրն արդեն իսկ սկսվել է իրագործվել, քանի որ 2019թ. գարնանը Արենի համայնքի Խաչիկ գյուղում գտնվող ջրամբարը ամբողջովին մաքրվել է տիղմից: Նախկինում ջրամբարը տանում էր 10. 000 մ^3 ջուր, իսկ մաքրման աշխատանքներից հետո 50.000 մ^3 ջուր:

2019թ, օգոստոսի 18-ին խումբը մեկնեց Շվեյցարիա:

Առաջին իսկ օրը՝18.08.2019թ. կայացավ հանդիպում Ժնևի Սաթին գյուղում՝ բազմամյա գինեգործության փորձ ունեցող տեր և տիկին Պելլեգրինների հետ: Ծանոթացանք նրանց կողմից թողարկվող Domain Grand՚Cour ապրանքանիշի հետ, կատարվեց շրջագայություն խաղողի այգիներում, որից հետո պատվիրակությունը մասնակցեց գինու համտեսման արարողակարգին: Այնուհետև պատվիրակությունը վերադարձավ Ժնև Հայաստանի դեսպան Անդրանիկ Հովհաննիսյանի հետ հանդիպման:

2019թ., օգոստոսի 19-ին խումբը մեկնեց Շվեյցարիայի Վալե շրջանի Սիոն քաղաք: Որի շրջանակում այցելեց Իվորնե Շուլլեր ընկերության հիմնադիր ղեկավարներին՝ տիկին Աննա Մյուլերին և Յակոբ Մյուլերին, կատարեց շրջագայություն խաղողի այգիներում, որից հետո մասնակցել է գինու համտեսման արարողակարգին: Ինչպես նաև պատվիրակությունը հանդիպել է Վալե շրջանի նախարար Քրիստոֆ Դաղբլեյի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվեց հետագա համագործակցության հարցեր Շվեյցարիայի Վալե շրջանի և Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի միջև: Ձեռք է բերվել համաձայնություն կազմակերպել այցելություն դեպի Վայոց Ձորի մարզ, ծանոթանալ մարզի հնարավորություններին հետագա համագործակցությունների համար: Ժնևում կազմակերպվեց հարցազրույց «Արձագանք» թերթի խմբագրության հետ: Հարցազրույցը կհրապարակվեն սույն թվականի սեպտեմբերին:

Գործուղման ընթացքում պատվիրակությունը հանդիպել է Շվեյցարիայում գործող <<Արմենիա բարեգործական հիմադրամի>> խորհրդի անդամների և խորհրդի նախագահի հետ: Բարեգործական հիմնադրամը որոշեց 11 մլն. դրամ հատկացնել մարզի Արենի

համայնքի սահմանամերձ Խաչիկ բնակավայրին գիշերային լուսավորության ցանցի վերակառուցման համար:

2019թ., օգոստոսի 20-ին պատվիրակությունը ուղևորվեց դեպի Ֆրանսիա, այցելեց Բուրժոնյե՝ Պուլինի Մուղաշե գյուղ: Տիկին Մարի Սիրանոսյանի հետ միասին հյուրընկալվեց «Puligny Montrachet» ընկերություն, տնօրեն պարոն Էտիեն Սուզետիի կողմից կատարեց շրջագայություն խաղողի այգիներում, որից հետո մասնակցեց գինու համտեսման արարողակարգին: Այնուհետև պատվիրակությունը այցելեց պարոն Պատրիս Ռիոնին:

Օգոստոսի 21-ին խումբը հանդիպեց Վիյ քաղաքի գլխավոր քարտուղար Գիոնատա Բոսսինիի և Ժնևի արտաքին կապերի դեպարտամենտի գլխավոր քարտուղար Ստիվ Բերնարդի հետ:

Օգոստոսի 22-ին խումբը այցելեց Ժնևի հայկական եկեղեցի և հանդիպեց Սբ. Գրիգոր Լուսավորիչ հիմնադրամի ղեկավար Դանիել Փափազյանի հետ: Ապա հանդիպեց Տղանոյի համայնքի ղեկավար պարոն Գի Լավորեյի հետ: Քննարկեց հետագա համագործակցության հարցեր Շվեյցարիայի և Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի միջև:

Նույն օրը պատվիրակությունը վերադարձավ Հայաստանի Հանրապետություն:

X _____

Հարգանքով՝ **Տ. ՍԱՐԳՍՅԱՆ**